24.06.24 - 26.06.24
10:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ

Ս.թ. հունիսի 24-26-ը՝ ժամը 10:00-ին, ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի 505 լսարանում կանցկացվի «Իսպանական մշակույթը և Իսպանիայի ժողովրդավարական ու եվրոպական կերտումը. հաղորդակցություն, գրականություն, թատրոն, կինո, երաժշտություն» խորագրով իսպանական մշակույթի եռօրյա դասընթացը։

Իսպանական մշակույթի դասընթացը կվարեն Մադրիդի Կոմպլուտենսե համալսարանի տարբեր ֆակուլտետների անվանի 5 դասախոսներ։

Դասընթացի ավարտին մասնակիցները կպարգևատրեն մասնակցության վկայականներով երկու համալսարաններից։

Դասընթացին ներկա կլինեն ՀՀ-ում Իսպանիայի դեսպանատան գործերի ժամանակավոր հավատարմատար Քրիստինա Կոնեսան, բարձրագույն և հանրակրթական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ, իսպաներենի մասնագետներ, իսպաներեն սովորող ուսանողներ, իսպաներենով և իսպանական մշակույթով հետաքրքրված այլ անձինք։

Դասընթացին գրանցվելու համար անհրաժեշտ է կոնտակտային տվյալներն ուղարկել հետևյալ էլհասցեին՝ complutensecurso@gmail.com։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am